

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2014թ. մայիսի 3-8-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանն այցելել են ք. Թեհրան (Իրանի Իսլամական Հանրապետություն) Իրանի Իսլամական Հանրապետության վիճակագրական կենտրոնի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջև համագործակցության մասին փոխըմբռնման հուշագրի շրջանակում երկկողմանի կապերի ընդլայնման և վիճակագրական գիտելիքների և փորձի փոխանակման նպատակով,
- ✓ 2014 թ. մայիսի 5-10-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Ազգային հաշիվների փորձագետների խմբի հանդիպմանը,
- ✓ 2014 թ. մայիսի 12-16-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի գլխավոր մասնագետներ Ս. Խաչատրյանը, Ն. Ատվաճատուրովան և նույն բաժնի առաջատար մասնագետ Մ. Խաչատրյանը մասնակցել են ք. Թբիլիսիում (Վրաստան) կայացած «Ազգային հաշիվներ» խորագրով բազային դասընթացին,
- ✓ 2014թ. մայիսի 12-14-ը ՀՀ ԱՎԾ վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի վիճակագրության բաժնի պետ Ք. Պողոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Շահբազյանը մասնակցել են ք. Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած Հայաստանի Հանրապետությանը մաքսային միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միասնական տնտեսական տարածքին միանալու հարցերով աշխատանքային խմբի 6-րդ նիստին,
- ✓ 2014թ. մայիսի 13-15-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած բնապահպանական ցուցանիշների միասնական նպատակային խմբի 8-րդ նստաշրջանին և ջրերի որակի վիճակագրությանը նվիրված սեմինարին,

- ✓ 2014թ. մայիսի 14-16-ը ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա. Անանյանը և գների և միջազգային համադրումների բաժնի պետ Գ. Մարտիրոսյանը մասնակցել են ք. Սանկտ Պետերբուրգում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Արդյունաբերական արտադրության ինդեքսներ» խորագրով տարածաշրջանային սեմինարին,
- ✓ 2014թ. մայիսի 22-23-ը ՀՀ ԱՎԾ «ՊՎՏՀ» ծրագրի բնապահպանության վիճակագրության ոլորտի մուտքագրող օպերատոր Ա. Պողպոմոզովան մասնակցել է ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած ԵՀԲԲ-ԲՏՏՀ ծրագրի շրջանակում մեթատվյալների և հաշվետվական ցանցի վերաբերյալ 3-րդ սեմինարին,
- ✓ 2014թ. մայիսի 27-28-ը ՀՀ ԱՎԾ բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի պետ Վ. Արևշատյանը մասնակցել է ք. Անկարայում (Թուրքիա) կայացած «Ազգային վիճակագրության թղթակիցների համար անտառային արտադրանքի վիճակագրություն» թեմայով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2014թ. հունիսի 2-5-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Որակը պաշտոնական վիճակագրությունում. գնահատման մշակույթը» խորագրով աշխատանքային հանդիպմանը և «Պաշտոնական վիճակագրության որակը» խորագրով Եվրոպական կոնֆերանսին,
- ✓ 2014թ. հունիսի 10-12-ը ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ք. Նիժնի Նովգորոդում (Ռուսաստանի Դաշնություն) կայացած «Պաշտոնական վիճակագրության մոդերնիզացում» խորագրով աշխատանքային հանդիպմանը: ՀՀ ԱՎԾ նախագահ Ս. Մնացականյանը հունիսի 10-ին մասնակցել է նաև ԱՊՀ վիճակագրական ծառայությունների ղեկավարների խորհրդի 51-րդ նիստին,

- ✓ 2014թ. հունիսի 23-27-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Ա. Սաֆյանը և Վ. Դավթյանը, ՀՀ ԱՎԾ տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի պետ Ա. Մարտիրոսյանը և նույն բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել են ք. Ուստ-Կամինոգորսկում (Ղազախստան) կայացած «Արմենիաինֆո» տեղեկատվական համակարգի ներդրման Հայաստանի փորձը ներկայացնելու և արևելյան Ղազախստանի մարզի համար Դեվինֆո տեղեկատվական համակարգի մշակման և ներդրման ուղղությամբ տեխնիկական աջակցություն ցուցաբերելու նպատակով այցելությանը,
- ✓ 2014 թ. հունիսի 21-ից – հուլիսի 6-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյումջյանը մասնակցել է ք. Փարիզում (Ֆրանսիա) կայացած «Մահացության պատճառական միտումները Կովկասյան երկրներում» ծրագրի շրջանակում աշխատանքային քննարկումներին,
- ✓ 2014թ. հունիսի 30-ից – հուլիսի 4-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Թուրինում (Իտալիա) կայացած «Անցում դպրոցից դեպի աշխատանք» հետազոտության տվյալների վերլուծություն» խորագրով ՀՀ ստուգումների կազմակերպման և անցկացման մասին,
- ✓ 2014 թ. հունիսի 30-ից – հուլիսի 6-ը ՀՀ ԱՎԾ մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը և նույն բաժնի վիճակագիր Կ. Ներսիսյանը մասնակցել են ք. Աստանայում (Ղազախստանի Հանրապետություն) կայացած «ՀՆԱ-ի փոփոխությանը հանգեցնող Ազգային հաշիվներ 2008-ի փոփոխությունները» խորագրով ուսումնական դասընթացին,

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2014թ. մայիսի 16-ին ՀՀ ԱՎԾ արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Հակոբյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Հայաստանի ազգային էլեկտրոհաշվեկշիռների նախապատրաստում 2011-2012թթ. համար» խորագրով աշխատանքային հանդիպմանը,

- ✓ 2014թ. մայիսի 20-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է ք. Երևանում կայացած տեղեկատվության կառավարման աշխատանքային խմբի հաղիպմանը,
- ✓ 2014թ. մայիսի 20-ին ՀՀ ՎՊԽ անդամ Յ. Պողոսյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ցածր ածխածնային զարգացումը Հայաստանում» խորագրով կլոր սեղան քննարկմանը,
- ✓ 2014թ. մայիսի 23-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016թթ. գործողությունների ծրագրի մոնիթորինգի միջգերատեսչական հանձնաժողովի ընդլայնված նիստին,
- ✓ 2014թ. մայիսի 27-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանում ԹՎինհինգի գործիքի գնահատման առաքելության արդյունքների քննարկմանը,
- ✓ 2014թ. մայիսի 30-ին ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Կայունությունից դեպի զարգացում» խորագրով աշխատանքային խորհրդակցությանը,
- ✓ 2014թ. հունիսի 2-4-ը ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ Նարինե Գրիգորյանը մասնակցել է ք. Ծաղկաձորում կայացած «Ժողովրդագրության հիմունքներ» խորագրով դասընթացին,
- ✓ 2014թ. հունիսի 6-ին ՀՀ ԱՎԾ մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Թրաֆիքինգի և դրա դեմ պայքարի լուսաբանման ամենամյա մրցանակաբաշխություն 2014-ին»,
- ✓ 2014 թ. հունիսի 17-19-ը ՀՀ ԱՎԾ աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած Հայաստանում ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության վավերացման (ՈՖԻՈՎ) համակարգի փորձնական ներդրման ծրագրի շրջանակներում միջոցառումներին:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ✓ 2014 թ. հունիսի 23-27-ը ՀՀ ԱՎԾ-ում էր ՄԱԿ-ի արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) փորձագետ Իգոր Ույյանովը ԱՊՀ երկրների համար Հարմոնիզացված արդյունաբերական վիճակագրության գծով տարածաշրջանային նախագծի շրջանակում տարեկան հետազոտության հարցաթերթի օգտագործման հնարավորությունների շուրջ քննարկումներ իրականացնելու նպատակով: